

Մեծարգոյ

Գ. Խմբագիր!

Յուլիոսի 16 ին. Իրիշանում, ասիթ
ունեցանք բանախօսելու. Տասերի
գիւտի 1500 և հայ ապագրութեան
100 ամեակի նշանակութեան մասին:

Այդ ասիթով Ձեր տեղական Քըզ-
թակից պ. Աւ.—նալ՝ Քերթիզ №
155-ում, իմ բանախօսութիւնը քննա-
դասել ուզելով խիստ անճիշտ տեղե-
կութիւններ է հաղորդել Ձեզ. Այս-
պէս օրինակ՝ նա ասում է, որ ես
կանգ եմ առել առիթ շուտ հայաստա-
նի աշխարհաց. ու պատմութեան վրայ-
մի փոքր էլ (ընդձ. մերն է) հայ ապա-
գրութեան պատմութեան մասին եմ
խօսել:

Յայտնում եմ, որ դա սխալ է. ես
խօսել եմ մի ամբողջ մաս. որի 1/2-ը
վերաբերել է խալդեերի և Մեծն Տոգ-
բանի մամանակի կուլտուրային, 1/2-ը
V դարի ասորի գիւտին, իսկ 1/2
մասը հայ ապագրութեան և նրա հե-
տեանքներին:

Գ. Աւ.—նալ, որպէս քննադատ, ի-
նքնից լաւ կաներ փոխանակ իր դա-
տագրութեանց, ասը իմ գասախօսու-
թեան կոնսպեկտը, որպէսզի ընթեր-
ցողը տեսնէր թէ ինչպէս, ես գ-րդա-
ցրել եմ իմ թեման, բայց նա այդ չէ
արել. ընկալառակը իր մտքերն է մէջ
բերել, որոնք բոլորովին իմս չեն և
չէին էլ կարող լինել. նա ասում է,
թէ դասախօսը թոյլ տեղի իրան մի
երկու սկզբաւոր (1!) սխալներ,
թէ ասորի գիւտով հայ գիրքը դա-
սաւ բոլորի սեփականութիւն և անձնիկ
սկսեցին հայ լեզուի կարգայ ու գրել-
(ընդձ. մերն է. Գ. Վ.):

Սա արդէն շփոթալից թիւն է. Այդ
թիւն հրաշք պիտի լի է, որ ասորի
գիւտից անմիջապէս այնու ամբողջ
հայերը գրապէս դառնային. Այդպիսի
սարսփեմակ միտք չգիտեմ ինչ հիման
վրայ է ինձ վերագրում պ. Թղթաղիցը:

Իբրև կո կրեա ապացոյց, որ ես
չէի կարող առել. թէ ասորի գի-
տից յետոյ, անկէ քն սկսեցին հայ լեզ-
ուի կարգայ գրել, պիտի յայտնենք,
որ գասախօսութեան այն մասում, երբ
ես խօսեցի յատկապէս Գուտներեզի
ապագրութեան գիւտի մասին, շնչտե-
ցի, թէ քանի որ գրքերը ձեռագիր
էին գրում, նրանք մեծաքանակ չէին
լինում, ուստի և խիստ թանկարժէք.
և ուրեմն մատչելի միայն հարուստե-
րին... ինքնին եզրակացութիւն հաս-
կանալի է:

Երկրորդ սխալս ա,ն է եզել, որ
իբր թէ ես առել եմ, ձեր պատ-
միչները ասորի գիւտից յետոյ սկսե-
ցին իրենց գրածքներում պատշապանի
հայ աշխատար գիւղացու դասը՝
(ընդձ. մերն է. Գ. Վ.):

Սա ուրդէն պարզապէս պ. քննա-
դատի երևակայութեան արդիւնքն է.
Ամբողջ գասախօսութեանս ընթացքում
եւ աշխատար գիւղացի տերիւնը չեմ
գործածել, ուր մեաց, որ առել թէ
(այն էլ V—VI դարում) ձեր պատ-
միչները սկսեցին պաշտպանել հայ
աշխատար գիւղացու դասը:

Ա. Կիրոյ համարելով լաւնել յարգելի
Քղթակցի իր սեփական դատագու-
թիւնների վերլուծութեան մէջ, պարտք
եմ համարում յայտնել, որ կորրեկտ
քննադատութիւնը ընդունելով որպէս
անհրաժեշտութիւն և իրովին գնահա-
տելի վերն, չեմ կարող սակայն չը-
ցուել, երբ ձեր քննադատները պո-
տով պահանջած լրջութեամբ չեն վե-
րբերում քննադատական գործին, ո-
րի հետեանքն այն է լինում, որ հա-
տարակութիւնը յանախ ստիպած է
լինում սեր սպիտակի և լոյսը խաւ-
րի տեղ ընդունել:

Գ. Հարգանեան